ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՆԵՐՍԵՍ ՄԵԾԸ ԵՎ ԱՇՏԻՇԱՏԻ ԺՈՂՈՎԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունելուց հետո, Հայոց Առաքելական եկեղեցին էապես նպաստում էր Հայոց Արշակունի թագավորության ներքին և արտաքին քաղաքականությանը, ամրապնդում նրա բարոյա-իրավական հիմքերը: Այս առումով հատկապես բացառիկ դեր էր վերապահված Ներսես Մեծ Կաթողիկոսին (353–373), որը սատար կանգնեց Արշակ Բ-ի (344–368) արտաքին-քաղաքական ձեռնարկումներին: Արշակ Բ-ի օրոք, երկրի ներքին և արտաքին հարաբերությունները բարելավելու առումով, մեծապես զգացվում էր Հայաստանի հեղինակավոր հոգևոր առաջնորդի կարիքը: Վերջինս պետք է ի զորու լիներ համախմբել հայ նախարարներին, ներգործեր նրանց քաղաքական վարքագծի, կողմնորոշման վրա, ամրապնդեր Արշակունյաց թագավորության հիմքերը, ապահովեր նրա միասնությունը:

Երիտասարդ Ներսեսը՝ Լուսավորչի տոհմի մեծ զավակը, որի երակներում հոսում էր նաև հայ Արշակունիների արյունը[1], Կեսարիայում հունական կրթություն ստանալով, խորապես յուրացրեց Հռոմեական կայսրությունում ձևավորված քրիստոնեաբանության հիմունքները, անշուշտ նաև պետականության սկզբունքները: Դառնալով Հայոց արքունի դիվանապետը, Ներսեսը նոր շունչ ու ոգի ներարկեց այդ բնագավառին և դարձավ «հաւատարիմ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեանն»[2]: Բայց դա դեռ նրա բեղմնավոր պետական-քաղաքական գործունեության նախաբանն էր: Ներսեսին ավելի կարևոր և մեր ժողովրդի համար հույժ բախտորոշ դեր էր վերապահված: Հայոց Արշակունիների քաղաքական շահերը պահանջում էին վերստին Հայոց Կաթողիկոսի գահին բազմեցնել Գրիգոր Լուսավորչի տոհմի շառավիղներին: Այդ նպատակին էր ուղղված Արշակ Բ-ի արքունիքում գումարված ժողովը, որտեղ հայ նախարարները համակամ որոշում կայացրեցին Ներսեսին ընտրել հայոց հովվապետ, որպեսզի «Նորոգեսցին պայծառ վարք աշխարհիս Հայոց»,- գրում է Փավստոս Բուզանդը[3]: Անհրաժեշտ էր ժողովրդին հոգևոր լիցք ներարկել, քանզի առանց հոգևորի, ինչպես մարմինն առանց հոգու, նա չէր կարող հարատևել: Արշակ Բ-ի հռոմեամետ կողմնորոշումը ևս որոշակի դեր խաղաց Ներսեսի ընտրության գործում: Պատահական չէր, որ Ներսեսը ձեռնադրվելու համար Կեսարիա

---

[1] Ներսեսը Արշակ Բ-ի քրոջ՝ Բամբիշի որդին էր (Փավստոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, III, ԺԵ, էջ 38, ԺԹ, էջ 42):

[2] Փավստոս Բուզանդ, IV, Գ, էջ 59:

[3] Նույն տեղում, IV, Գ, էջ 58:

ուղևորվեց թագավորի հատուկ հանձնարարական-երդվարտակով և ավագ նախարարների ուղեկցությամբ:

354 թ. Աշտիշատում Ներսեսի գումարած հայոց առաջին եկեղեցաժողովը հիրավի դարակազմիկ նշանակություն ունեցավ Հայաստանի հոգևոր, ներքաղաքական կյանքում: Աշտիշատում հայոց առաջին եկեղեցաժողովի գումարումն ուներ ծանրակշիռ դրդապատճառներ: Այդ ավանդը եղել էր հեթանոսական Հայաստանի ազդեցիկ կենտրոններից մեկը և հավակնում էր իր այդ դերը հնարավորին չափով պահպանել նաև քրիստոնեության տարածումից հետո: Ներսեսը գտավ, որ հին կրոնն արմատախիլ անելու համար անհրաժեշտ է նրա դեմ պայքարը կազմակերպել նրա հինավուրց և ազդեցիկ կենտրոնում՝ ժողովրդի հիշողությունից ջնջելով հեթանոսության հետքերը: Ժողովի որոշումներն էապես բարելավեցին երկրի բարոյա-քաղաքական մթնոլորտը, ամրապնդեցին Հայոց պետականության հիմքերը, որի զորեղ ազդակները տվյալ պահին կարող էին դառնալ քրիստոնեական հիմունքներով երկրի ներքին կյանքի բարեկարգումը, բնակչությանը պետության և եկեղեցու շուրջ համախմբելը: Աշտիշատի ժողովն առաջին հերթին զբաղվեց բարեգործական խնդիրներով՝ համարձակ կերպով արմատավորելով քրիստոնեության մարդասիրական սկզբունքները: Այն նպատակաուղղված էր բնակչության թե՛ հոգևոր և թե՛ ֆիզիկական կատարելագործմանը, ներդաշնակ կենսաձևի հաստատմանը: Հատկանշական է, որ ժողովն առաջին հերթին զբաղվեց առողջապահական և բարեգործական խնդիրներով: Որոշվեց բորոտների և անբուժելի այլ հիվանդների, հաշմանդամների համար հիմնել հատուկ հիվանդանոցներ, բոլոր բնակավայրերում բացել աղքատանոցներ և այլն: Նման միջոցառումների կենսագործման համար անհարժեշտ էր պետական հովանավորություն:

Աշտիշատի ժողովը հատուկ ուշադրություն դարձրեց Հայոց աշխարհի բարքերը նորոգելու, բարեշրջելու խնդիրներին, որոնց կենսագործման համար անհրաժեշտ էր բարձրացնել եկեղեցու հեղինակությունը: Այդ էին պահանջում նաև պետության ներքին և արտաքին-քաղաքական շահերը: Ուստի թագավորը և Հայոց ավագանին սատար կանգնեցին նաև Ներսես Մեծի եկեղեցական նորամուծություններին, որոնք լծորդվեցին ժողովրդի կենսակերպը բարեկարգելու միջոցառումների հետ: Ինչպես հավաստում է Փավստոս Բուզանդը, Ներսես Մեծը վերաշինեց Հայաստանի ավերված եկեղեցիները, սահմանեց եկեղեցու ծիսակարգը և առաքելական քարոզչությամբ ջանում էր բարեփոխել ժողովրդի բարքերը[4]: Նմանօրինակ բարեշրջումը հնարավոր էր միայն հայ հոգևոր և աշխարհիկ վերնախավի համաձայն գործունեության առկայության դեպքում: Անշուշտ դա պայմանավորեց Աշտիշատի եկեղեցաժողովին աշխարհիկ տերերի և եկեղեցականների համատեղ մասնակցությունը: Մովսես Խորենացին գրում է, որ այդ ժողովում հիմք դրվեց Հայաստանի եկեղեցաժողովներին աշխարհականների և եկեղեցականների համատեղ մասնակցությանը[5], որը սովորական դարձավ նաև հետագա բոլոր եկեղեցաժողովներում՝ նշանավորելով Հայոց եկեղեցու հույժ կարևոր դերը երկրի ներքաղաքական կյանքում:

Աշտիշատի ժողովին Հայոց թագավորի և նախարարների լայն մասնակցությունը պայմանավորված էր Հայաստանի հասարակական կյանքը բարեշրջելու

---

[4] Նույն տեղում, IV, Դ, էջ 62-63:

[5] Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, 3-րդ մաս, գլուխ Ի, էջ 279:

գործում նրանց խորը շահագրգռվածությամբ, քանի որ ժողովում արծարծված խնդիրները շոշափում էին նաև աշխարհիկ տերերի կենսական շահերը: Ժողովը օրինադրեց Հայաստանի ներքին կյանքի սովորույթները, կարգ ու կանոնը: Նրա որոշումները կյանքում կենսագործվեցին՝ ստանալով պարտադիր կանոնական նորմերի բնույթ նաև շնորհիվ թագավորի ու նախարարների սատարման (Աշտիշատի ժողովի որոշումները թեև չեն մուծվել Հայոց կանոնագրքերի մեջ, բայց հիշվում են Փավստոսի, Մովսես Խորենացու /ժողովի վայրը չի նշվում/ և այլոց կողմից):

Ներսես Մեծը, թագավորի և ավագանու կամակցությամբ, ջանում էր Հայաստանում արմատավորել Արևմուտքում կենսագործված եկեղեցական բարեկարգումները[6]: Դա թելադրված էր նաև Արշակ Բ-ի, նախարարների արևմտամետ կողմնորոշմամբ, որը համընկնում էր Հայոց եկեղեցու որդեգրած կրոնա-քաղաքական ուղեգծին Լուսավորչի տան հովվապետների ավանդական դիրքորոշմանը:

Ներսես Մեծի բարեկարգությունները նշանավորեցին Հայաստանում քաղաքակրթական նոր շրջափուլին անցնելը: Աշտիշատի ժողովը ոչ միայն հառնել տվեց մինչ այդ Հայաստանում հրավիրվող աշխարհաժողովների ավանդույթները, այլև առաջադրեց և լուծեց երկրի հոգևոր և աշխարհիկ տերերի առջև ծառացած ներքին քաղաքական և դավանական հրատապ խնդիրներ, որոնք կանխորոշելու էին Հայաստանի հետագա զարգացումը քրիստոնեական քաղաքակրթության ուղիով: Այն որոշակի իրավանորմեր, միջոցառումներ մշակեց երկրի նախարարական, պետական համակարգի հիմքերն ամրապնդելու համար: Նախարարները, տուրք տալով հեթանոսաբարո կենսակերպին, սովորույթներին և իրենց տոհմական ժառանգությունը պահպանելու միտումին, ամուսնանում էին իրենց տոհմակիցների հետ: Աշտիշատի ժողովն արգելեց այդ սովորույթը[7]: Նախարարական համակարգի, պետության հիմքերն ամրապնդելուն էր նպատակաուղղված նաև ժողովի և անձամբ Ներսես Մեծի կողմից Հայոց թագավորին և նախարարներին հղած պատվիրանը՝ լինել գթառատ և բարյացակամ ստորադրյալների, «ծառաների» հանդեպ, ծանր հարկապահանջությամբ չնեղել նրանց, իսկ վերջիններիս հորդորեց «կալ յարդարն հնազանդութեան իւրեանց տերանց»[8]:

Հնարավոր է, որ Աշտիշատի ժողովում վերահաստատվել է նախարարական գահակարգը, ինչը արձագանք է գտել Ներսես Մեծի Վարքում, որտեղ նշվում է, որ Ներսեսը «նորոգէր զգահս իշխանացն Հայոց»՝ թվով 400 բարձ[9]: Իհարկե, նախարարների բարձերի թիվն այստեղ ուռճացված է: Արշակ Բ-ի օրոք ակնհայտ նախարարական տոհմերի թիվը չէր անցնում հիսունից[10]: Բայց Վարքի հեղինակը կամեցել է այդպիսով շեշտել Ներսեսի վճռորոշ դերը երկրի պետական ոլորտներում: Որ Ներսեսը կարող էր վերահաստատել տալ նախարարական «բարձերը» արքունիքում, կասկածից վեր է, Հայոց Կաթողիկոսը նման իրավազորություն ուներ անգամ Պարսից արքունիքում (մարզպանական շրջանում): Բարձերի վերոնշյալ թիվը հավանաբար արդյունք է Գրիգոր Լուսավորչի ժամանակ իբրև թե հաստատված 400 եպիսկոպոսությունների մասին

---

6 N. Garsoïan, Nersès le Grand, Basile de Césarée et Eustate de Sebaste, "REA", 1983, p. 166.

7 Մովսես Խորենացի, III, Ի, էջ 280:

8 Փավստոս Բուզանդ, IV, Դ, էջ 64–65:

9 Սոփերք հայկականք, Զ, Վենետիկ, 1853, էջ 32:

10 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПБ, 1908, с. 248.

Ագաթանգեղոսի երկում հետագայում մուծված և պատմական հիմք չունեցող վերնուշի (նկատենք, որ Ագաթանգեղոսն այլ առիթով Հայաստանում հիշում է լոկ 12 եպիսկոպոսների):

Աշտիշատի ժողովի ընդունած որոշումների շնորհիվ Հայոց եկեղեցու բարձր հեղինակությամբ սրբագործվեց Հայաստանի պետական-քաղաքական համակարգը: Քրիստոնեության մարդասիրական վեհաշունչ գաղափարները հուշեցին նաև ժողովրդի բարոյական կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, որոնք պետք է վերափոխեին բնակչության հնօրյա բարքերն ու սովորույթները, առողջացնեին հասարակական հարաբերությունները: Մարդասիրական առումով կարևոր միջոցառում էր նաև աղքատանոցների հիմնումը[11]: Վերջիններս պետք է պատսպարեին աղքատներին, որբերին, որոնք այսպիսով հսկողության տակ կառնվեին՝ զերծ մնալով անկարգություններից, հակաօրինական արարքներից: Քանի որ Հայոց եկեղեցին օժտված էր նաև օրինատեղծ և դատաստանական իշխանությամբ, ուստի Աշտիշատի ժողովի ընդունած կանոններում տեղ են գտել նաև քաղաքացիական և քրեական իրավունքի նորմերը, որոնք կանոնակարգվեցին և ստացան պաշտոնական տեսք: Ժողովը շեշտը դրեց բնակչության միջից քրիստոնեական բարոյականությանն անհարիր սովորությունների՝ հարբեցողության, սեռական սանձարձակության, թշնամու հանդեպ վրիժառության, սպանությունների և հեթանոսապաշտ վարքագծի (հանգուցյալների վրա անպարկեշտ ողբակոծումը, ամուսնական անհավատարմությունը, ազգականների հետ ամուսնությունը, մեռելատի ուտելը և այլն) արմատախիլ անելու վրա: Ժողովրդի քաղաքացիական համակեցության, քրիստոնեության մարդասիրական սկզբունքների հաստատման նպատակով Աշտիշատի ժողովը հատուկ ուշադրություն նվիրեց նաև անբուժելի հիվանդների (բորոտների, ընկնավորների), հաշմանդամների նկատմամբ խնամատարության կազմակերպմանը: Մեկուսի վայրերում նրանց համար հիմնվեցին պատսպարաններ՝ անհրաժեշտ հոգածությամբ, վերահսկողությամբ: Օտար երկրներից և Հայաստանի տարբեր գավառներից ժամանածների համար հիմնվեցին հյուրատներ[12], որպեսզի պատսպարան չունենալու պատճառով նրանք չդիմեին վնասապարտ քայլերի, օրինազանցության[13]:

Աշտիշատի ժողովը առանձնահատուկ ուշադրություն դարձրեց նաև Հայոց եկեղեցու նվիրապետական, ծիսական հիմքերի ամրապնդման, կուսակրոնությանը զարկ տալու վրա: Մինչ այդ կուսակրոնները, միանձնուհիները առանձնացած չէին իրենց ընտանիքներից, ապրում էին նրանց հետ միևնույն բնակարանում, քաղաքներում ու գյուղերում[14], ինչն անհարիր էր անապատականի նզնակեցիկ վարքին, քրիստոնեական կրոնի սկզբունքներին: Այդ սովորությանը վերջ տալու նպատակով ժողովի որոշմամբ Հայաստանի տարբեր վայրերում հիմնվեցին մենաստաններ[15], որոնց թիվը հասցվում է երկու հազարի[16]: Եկեղեցու կրթված մեծարժան սպասավորներ պատրաստելու, բնակչության հոգևոր դաստիարակության, ժողովրդի ընդերքում եկեղեցու հոգևոր արմատները

---

[11] Փավստոս Բուզանդ, IV, Դ, էջ 63:

[12] Նույն տեղում, IV, Դ, էջ 63-64:

[13] Հմմտ. Ն. Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, Ա. Շուշի, 1903, էջ 317:

[14] Սոփերք հայկականք, Զ, էջ 39-40:

[15] Մովսես Խորենացի, III, Ի, էջ 280:

[16] Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց: Ա, Վենետիկ, 1787, էջ 442:

ամրապնդելու նպատակով, ժողովը որոշեց Հայաստանի բոլոր գավառներում բացել դպրոցներ հունարեն և ասորերեն լեզուներով[17]: Այսպիսով, Աշտիշատի ժողովի որոշումները դարձան հետագայում՝ Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի գյուտի շնորհիվ Հայաստանում ծավալված գրական-լուսավորչական շարժման յուրատեսակ նախերգանքը: Հատկանշական է, որ Մովսես Խորենացին գրում է, թե Մեսրոպ Մաշտոցը «սնեալ և ուսեալ էր առ Մեծին Ներսիսի»[18]:

Անշուշտ, բարեգործական և կրթա-լուսավորչական հիմնարկների նմանօրինակ ցայտղավորված լայն ցանցը կարող էր կենսունակ լինել և հարատևել Հայոց պետության հովանավորչական քաղաքականության պայմաններում: Ինչպես հաստատում է Մովսես Խորենացին, բորոտանոցների, աղքատանոցների համար հատկացվեցին «զաւանս և զգաւարակս» և հասութաբեր այլ միջոցներ, որպեսզի հոգան նրանց կարիքները[19]: Բացի այդ, բարեգործական հիմնարկների, դպրոցների համար արքունի գանձարանից հատկացվեց պատկառելի գումար, քանի որ Աշտիշատի ժողովի որոշմամբ անցկացվող բարեփոխությունները դիտվում էին որպես համապետական գործ:

Ներսես Մեծը ջանում էր երկրում ոչ միայն խորն արմատավորել քրիստոնեության հոգևոր-բարոյական սկզբունքները, այլև ըստ կարելվույն դրանց հաղորդել պետական կենսաձևի որոշակի երանգներ, ուստի բարեփոխությունները համակեցին Հայոց թագավորության բոլոր ոլորտները՝ ընդգրկելով հասարակության լայն խավերին, և, ինչպես գրում է պատմիչը, ուղղված էին անխտիր «առ ամենեսին, առ մեծամեծս և առ պատուականս և առ անարգս, առ հարուստս և առ աղքատս, առ ազատս և առ շինականս»[20]:

Այս բարեփոխությունները ցայտունորեն դրսևորեցին քրիստոնեական կրոնի համամարդկային էությունը, ժողովրդավարական ոգին, որի շնորհիվ հետագայում կյանքի կոչվեց հայոց լուսավորչական շարժումը՝ իր մեջ ներառնելով ժողովրդական լայն զանգվածներին: Բարեկարգումները նաև Հայոց պետության և եկեղեցու արձագանքն էին ժամանակի առաջադրած արմատական, կենսական պահանջմունքներին, նրանց համադաշն գործունեության արգասիքը: Դրանք պետք է նաև երկրում ստեղծեին հոգևոր-քաղաքական ներդաշնակություն, կայունացնեին հասարակական հարաբերությունները, խթանեին հոգևոր-մշակութային առաջընթացը՝ այն կապակցելով պետական-քաղաքական ոլորտներին:

---

17 Փավստոս Բուզանդ, IV, Դ, էջ 65:

18 Մովսես Խորենացի, III, ԽԷ, էջ 316:

19 Մովսես Խորենացի, III, Ի, էջ 279:

20 Տե՛ս Փավստոս Բուզանդ, IV, Դ, էջ 67: